ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 366

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքը (Քանաքեռավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Նոր Հաճըն համայնքի (Քանաքեռավան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքը (Քանաքեռավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-064-0036-0079 կադաստրային ծածկագրով 0.1923 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողեր	07-064-0036-0079 կադաստրային ծածկագրով 0.1923 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր, գոտևորման նախագծում հարկայնությունը (ԲՆԿԳ-3)՝ 6-9 հարկ

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պայմանը (կցվում է):

4. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Քանաքեռավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի Քանաքեռավան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, « 11 » «նոյեմբերի» 2025 թ.